

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՆԱՄԱԿԸ ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ Մ. Ս. ԳՈՐԲԱՉՈՎԻՆ

ՄԵԾԱՀԱՐԳ ՄԻԽԱՅԻԼ ԳՈՐԲԱՉՈՎ,
ՆԱԽԱԳԱՀ ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ

Մոսկվա

Մեծահարգ Տիար Նախագահ,

Անցյալ ամսի սկիզբներին առիթունակությունը ունեցանք տեղյակ դառնալու Հայ ժողովուրդի նկատմամբ Ձեր բարի ու ջերմ խոսքերին, որ ուղղել էիք Մոսկվայի մեր ներկայացուցիչ՝ Տիրան Եպիսկոպոսին, Հոկտեմբերյան հեղափոխության տարեդարձի առթիվ, Քրեմլում տեղի ունեցած ընդունելության առթիվ:

Շնորհակալ ենք Ձեզ սրտանց: Բարձր գնահատելով Ձեր ազնիվ զգացումները, այլ և արտահայտիչը լինելով մեր հավատացյալ ժողովուրդի ի Հայաստան, ի Լեռնային Ղարաբաղ և արտասահմանում բնակվող ավելի քան երկու միլիոն մեր հավատացյալների ու հայ եկեղեցական կազմակերպությունների, պարտք ենք զգում Ձեզ փոխանցելու նրանց վիշտը և հուսախաբությունը՝ 28 նոյեմբերի Գերագույն խորհրդի որոշումների նկատմամբ, Լեռնային Ղարաբաղի հարցի վերաբերյալ, որ բոլորը նկատում են անհամապատասխան ազգությունների ազատ ինքնորոշման իրավունքի և դեմոկրատական սկզբունքների:

Բոլորը այն տպավորության տակ են, թե Գերագույն խոր-

հուրդը առանց հանգամանորեն քննարկելու Հանձնաժողովի ներկայացրած եզրակացությունները, մեխանիկորեն քվեարկած և տվյալ փաստաթուղթը, առանց անդրադառնալու, թե մի ամբողջ ժողովուրդ գլորում են անդունդը մահացու հուսահատության:

Պետք է իրոք անբացատրելի համարել, որ Խորհրդային Միության հավատարիմ մի ժողովուրդի նկատմամբ, խորհրդային իշխանության հաղթանակի համար անցյալ դարու վերջերից սկսյալ իր կարևոր մասնակցությունը բերած մի ժողովուրդի նկատմամբ, նման վերաբերմունք ունենալ, այսինքն ժխտել նրա պատմական մի հատվածի՝ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդի իրավունքը ինքնորոշվելու և միանալու Խորհրդային Հայաստանի Հանրապետության:

Այս արդար ու դեմոկրատական սկզբունքին, մեր դրացի հանրապետությունը հակադրում է իր տերիտորիալ սուվերենության սկզբունքը: Խորհրդային հանրապետությունների սուվերենության սկզբունքը մենք գտնում ենք օրինական և արդար, բայց ոչ ոտնահարումովը այլ ժողովուրդների ինքնորոշման իրավունքի, ինչ որ Լեռնային Ղարաբաղի պարագան է:

Սուվերենության ըմբռնումը՝ ազգությունների ազատ ինքնորոշման իրավունքի խափանումով, դա սուվերենության գաղութարար ըմբռնում է, որ հանդիսանում է ժխտումը իսկական սոցիալիստական գաղափարախոսության, ժխտումը՝ Ձեր հերոսական ջանքերով բերեստրոյքայի և դեմոկրատիայի կենսագործման, որ այնքան հարազատ են նաև Քրիստոսի Ավետարանի ոգուն ու քրիստոնեական Եկեղեցու ուսմունքին:

Իբրև Հայ Եկեղեցու առաջին սպասավոր և հոգևոր ներկայացուցիչը համայն մեր հավատացյալ ժողովուրդի, դիմում ենք Ձեզ՝ հավատալով, որ Լեռնային Ղարաբաղի հարցը կհանգի իր արդար լուծման, հիմնված ժողովուրդների ազատ ինքնորոշման այն սկզբունքների վրա, որոնց՝ վրա կառուցված իսկ է խորհրդային բազմազգ ժողովուրդների միությունը:

Առանց ժողովուրդների ինքնորոշման իրավունքը հարգելու և կյանքի կոչելու կխորհինք, թե պարզապես հնարավոր չէ Խորհրդային Միության ազգությունների միջև համերաշխություն ստեղծել: Կարծում ենք, որ այս սկզբունքը պետք է իբրև խաչիսխ սկզբունքներից մեկը հանդիսանա բերեստրոյքայի ու դեմոկրատիայի մարդասիրական մեծ ծրագիրների իրագործման:

Մնում ենք աղոթող Ձեր քաջառողջության ու Ձեր ժողովրդանվեր ու հայրենաշեն իդեալների կենսագործման համար՝ հօգուտ Խորհրդային Միության բոլոր ազգությունների համերաշխ ու խաղաղ գործակցության:

Խորին հարգանքով և բարի մաղթանքներով՝

ՎԱԶԳԵՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,

5 դեկտեմբեր 1989 թ.